



ԱՐԱ ՄԱՐԿՈՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՊԱՆԱՔԱՐ ՄԸ ԿԱՐՆՈԲԱԴԻ (ԲՈՒԼՂԱՐԻԱ) ՍՈԿՈԼՈՎՈ ԳՅՈՒՂԻՆ ՄԵԶ

Սոֆիայի բուլղար լեզվի ինստիտուտի գիտական ավագ աշխատակից պր. Իվան Գլըրովի կողմէ տրված տեղեկության վրա, վերջրա հայտնի եղավ, որ Կարնոբադ քաղաքի շրջանի Սոկոլովո գյուղին մեջ կտնվի հայկական տապանաքար մը:

Տապանաքարի արձանագրությունը ուսումնասիրելու նպատակով այցելեցինք հիշյալ գյուղը. Սոկոլովո, որուն հին անունը Դուլանցա է, կտնվի Կարնոբադ քաղաքի արևելյան կողմը, 7 կիլոմետր հեռու. Թուրքերու կողմե հիմնված, գյուղը նախապես եղած է ագարակը. Արբաս անոնով թուրքի մը. Ագարակին շորջը կառուցված էին 20—30 տուներ, ուր կրնակեին ագարակի մշակները. Անցյալ դարու վերջը և ներկա դարու սկիզբը այստեղ կգաղթեն նովազագորայի և Զիրքանի շրջաններեն բուլղարներ, իսկ թուրքերը հետզհետե կհեռանան:

Գյուղի հյուսիսային ծայրը կտնվի ոչ հեռավոր անցյալի մեջ կառուցված աղբյուր մը, որուն ավաղանին առջև գտանք հայերեն արձանագրությամբ տապանաքար մը. Տապանաքարը ուղիղ վեցանկյուն է և լավ պահպանված: Նինված է կանաչ քարե, հետևյալ ժամանակով. 1,50 մ. երկայն, 0,52 մ. լայն,


0,32 մ. հաստ: Տապանաքարի վրա կա լավ պահպանված ութը տողնոց արձանագրություն մը, իսկ անոր տակ հավասար մեծությամբ երկու ուսուցիկ նոճիներ: Տապանաքարը ունի համարված ուղղանկյուն կազմող երեք փորագրված գծեր շրջանակ մը (տե՛ս նկարը).

«Այս է տապան
հանգստեան
Վահրավեցի
Մարութայի
որդի թարսեղին
որ փոխեցաւ
առ Ա. Խոտուա] ծ
ՔՎ [ին] ՌՃԽէ (1147—1698)»:

Առաջին տողին և երկու անգամ երկրորդ տողին վրա «ա» և «ն», չորրորդ և հինգերորդ տողերու տա» և «ր», հինգերորդ տողի «ո» և «ր», «ո» և «ի», «ի» և «ն», վեցերորդ տողի «ո» և «ր», «ո» և «ի», «ի» և «ն», ութերորդ տողի «թ» և «վ» տառերը կապկիր են: Տառերու մեծությունը 3,5—7 սանտիմետր է:

Հայտնի է, որ Մարութան Վահրավեցի է: Վանա քաղաքի եկեղեցիի խորանին ետևը կտնվի 1746 թվականի հայերեն տապանա-

ԱՅՍԵ ՏԱՂԻ
ՀԱԳՈՍԵՆ.
ՎԱՀՐԱՎԵՑԻ
ՄԱԴԱԿԱՅԻ
ԴՐԱՎԱՎԵԼԻ
Դ.ՓԱՆԵՑԱՒ
ԱՐ ԱՌ
ԲՐ ՃԽ Ը



գրություն մը, որուն մեջ կկարդանք «Կահրավեցի մահտես Ղեռնդ» անունը¹:

1 Արա Մարկոս, «Վառնայի Հայ գաղութը», «Երևան»
բերք, թիվ 109 012, Սոֆիա, 1960:

Ուրկէ՝ բերված է Սոկոլովո գյուղի այս տապանաքարը: Հստ տեղացիներու տեղեկության, տապանաքարը զետեղված էր «Զիֆլշկա չեղմա» կոչված աղբյուրի մեջ, Աբրասի ագարակին մոտ: Նոր աղբյուրի կառուցումին հետո (20 տարի առաջ), տապանաքարը փոխադրված է ալֆմյան վայրը: Հիշյալ անձերը հաղորդեցին, թե ըստ հին ծերունիներու պատմության, քարը բերված է Կարնոբադի ճամբան Վրա գտնված մարգագետիններին: «Զիֆլշկա չեղմա»-ի մոտ կար այսպիսի ուրիշ քար մը ևս: Տեղվուն վրա քննեցինք ու իսկապես գտանք կիսաթաղ նման քար մը ևս: Քարի երեսին վրա արձանագրությունը բոլորովին ջնշված է, սակայն կան ճշտիվ նման շրջանակի մը հետքերը, ինչպես առաջին քարին վրա:

Վերի տվյալները իրավունք կուտան կատարյալ վստահությամբ ենթադրելու, որ սույն տապանաքարերը բերված են ատենոք Կարնոբատի մեջ ապրող հայ գաղութի մը Հինդիք զգմանատուննեն, որուն մասին միայն չեխ պատմաբան Կոնստանտին Երեշեկ կհիշե իր «Ուղևորություններ Բուլղարիո մեջ» աշխատության մեջ²:

Սույն տապանաքարի արձանագրությունը
առ այժմ միակ առարկայական հուշարձանն
է փաստող, թե իսկական Կարնոբագի մեջ
ապրած է հին հայկական գաղութ մը, որու
մասին մենք ոչինչ գիտենք, ուրկի^ե, ե՞րբ
եկած է, ի՞նչ թվով և ե՞րբ անհետացած է:
Կրնանք ենթադրել, որ ինչպես թրքական տի-
րապետության շրջանին կազմված մյուս բուկ-
զարահայ գաղութիներու, նույնպես և անոր
ծագումը կսկսի Ժէ գարուն:

² Др. Конст. Иречек, „Пътувания по България“, т. II, 1899 г., стр. 744.

